Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 22 ՅՈՒՆՎԱՐ 1905 — ԹԻՒ 683

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1 50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ և երկրորդ անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար
ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

R. P. Kalemcarian W.
(Lubriche)
Meschitharistengasse 4.
Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ." Варна

Redaction du journal „Char oum" (Bulgarie) Varna

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԿՈՒԶԷ՞Ի ՍԻՐԵԼ

—)o(—

Կուզէի սիրել կեանքի բուռն թափով,
Ժպտով մ'երազել, համբոյրով մ'ապրել.
Կուզէի սիրել խանդոտ գորովով,
Սիրելո՛վ ապրիլ, սիրելով խամրիլ..

Ու սիրտս զարթնեց, սի՛րտս լուռ ու կոյս
Ապրելու տենչո՛վ լեցո՛ւն, արբշիռ,
Ու սիրտս զարթնեց համակ արշալոյս,
Երկի՛նք մ'երազներ կրկնելով ժպտուն։

•
• •

Ծփո՛ւն սուերներ, դէմքե՛ր դալկահար
Պաղ նայուածքիս տակ լռիկ սահեցան.
Իղձե՛րս ղալար, սի՛րտս դողահար,
Վշտի՛, արցունքի փոխարկեցան..

Հրանտ
Բարիզ

ԱՌԱՋԻՆ ՊԱՅԹՈՒՄ

«Շարժում»ի, տօներու և իմ բացակայութեան առթիւ, չը հրատարակված միջոցում Ռուսիոյ մէջ տեղի ունեցան նմանը չը տեսնված խռովութիւններ, որոնց մասին «Շարժում»ի ընթերցողները չը կարողացան յստակ գաղափար կազմել։ Մանրամասնութիւնները թողնելով յառաջիկայ համարներով հաղորդելու մեր ընթերցողներին, մենք առայժմ կաշխատենք միայն այդ խռովութիւնների նշանակութեան մասին խօսել և նրանց պատմական խոշոր նշանակութիւնը չեշտել։

Մինչեւ օրս Ռուսիոյ մէջ փոքր չափով խռովութիւններ կամ ահաբեկական սարսափեցնող գործեր շատ են կատարվել. սակայն երբեք չէր պատահել որ տասնեակ հազարներով ռուս ամբոխը զէնք ձեռքին ասպարէզ գայ, հէնց Ցարի մայրաքաղաքում, զինուորներին դիմադրելու որոշումով և յայտարարելու որ Ցարի ռէժիմը անտանելի է ու պէտք է չափ, սահման դրի Ցարի և իր սատրապների կամայականութեանց։

Տօների միջոցին, Պորտ Արթուրի անկումից անմիջապէս յետոյ, ռուս ամբոխը շարժվեց, մայրաքաղաքը և ուրիշ մեծ քաղաքներ վերածվեցին պատերազմի դաշտի, արիւնը գետերի պէս հոսեց փողոցներում և ռուս ժողովուրդը տասնեակ հազարների ձայնով յայտարարեց ռուս բռնապետութեան որ այլեւս ինքը անկարող է դիմանալ բռնակալական այն ռէժիմին, որ, ինչպէս յայտարարել էր Տօլստոյը վայել է Աֆրիկէի կիսավայրենի ցեղերին։

Այս ժողովրդային խոշոր դըժգոհութեան պայթումը Ռուսիայում իր տեսակին մէջ առաջինն է և սպառնալիքն այն խոշոր ապստամբական փորձի, որը թերեւս մօտիկ ապագայում պէտք է տակն ու վրայ անէ ամբողջ Ռուսաստանը, ուերակների վերածէ անտանելի ցարիզմը։ Այդ սարսափեցնող ազդարար նշանից կատաղել են ռուս միապետականները, որոնք երենց ռէժիմի մօտալուտ մահը զգալով վերջին ճիգերը հաւաքած ամենայն կատաղութեամբ խեղդում են բողոքողներին և արդէն գոնէ առժամապէս յաջողել են խեղդել։

Սակայն իզուր ջանք բռնակալների կողմից. ռուս ժողովուրդը արեան հոտը առաւ և ճաշակեց. նա կը գնայ պատմութեան գծած ճամբով և կը ոչնչացնէ միապետութիւնը այնպէս՝ ինչպէս ոչնչացրել են Եւրոպական բոլոր ժողովուրդները։

ՎԱՐԴՕ

ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

Խմբագրական սեղանի վրա դարսված են մեծ քանակութեամբ նոր թերթեր և ամսագրեր, այնքան շատ որ ֆիզիքական հնարաւորութիւնը չը կայ այդ ամէնը կարդալու և հասկանալու թէ ի՞նչի համար, ի՞նչ նպատակով և ինչ ուղղութեամբ են հրատարակվում այդ բոլորը։ Մի ժամանակ հայերը եկեղեցի շինելով էին զբաղվում. և այսօր մենք Հայաստանի ամէն անկիւնում կարող ենք միայն և միայն եկեղեցիների մնացորդների և աւերակների հանդիպել. այսօր հայերը թերթ են հրատարակում և ապագայ սերունդը՝ ներկայ շրջանի հայութեան իբր յիշատակարան թերթերի աւերակներ պէտք է տեսնէ։

Անցեալ տարվան հրատարակութիւնների վրա այս տարի աւելացել են, «Լուսաբեր», Սիսուան, Հորիզոն, Շիրակ, Հերիք է Նոր Ջուղայի լրաբեր. բացի այդ հրատարակվածներից դեռ շատ պարոնների ուղեղային արգանդներում կան և նոր հրատարակվելիքներ։

Ի՞նչով բացատրել այս զարմանալի երեւոյթը։ Արդեօք հայ թերթերը մեծ չա՞ն են տալիս հրատարակիչների՞ն։ Պարզ է, անուրանալի ճշմարտութիւն է, որ ոչ։ Արտասահմանում հրատարակվող բոլոր թերթերը առանց բացառութեան, ամէնքն էլ կամ պարտքի տակ են, կամ հազիւ հազ քարշ են տալիս հրատարակողների և խմբագիրների գոյութիւնը իրենց տուած արդիւնքով։ Ուրեմն շահը չէ ստիպում հրատարակել նոր թերթ. այլ թերթը հրատարակելու հիւանդութիւնը և մեծամտութիւնը։ Ամէն հայ կարծիք ունի որ ինքը ամենալաւ թերթը կարող է հրատարակել. գրաշար, վարժապետ, ուսանող, այր ու բեն գիտցող, գործաւոր. ամէնքն էլ եղած թերթերին չեն հաւանում, իրենց թերթն են ուզում ունենալ իրենց գրական ախտի գոհացում տալու համար ազատ ասպարէզ են ուզում ունենալ։

Ու ստեղծվում է նոր թերթը, նոր ամսագիրը. հոգ չէ թէ նա մի շաբաթ, մի ամիս, մի տարի կարող է գոյութիւն ունենալ. բաւական է որ հրատարակողը իբրեւ հրատարակիչ կամ խմբագիր հայ մամուլի պատմութեան մէջ տեղաւորվի։

Ողորմելի ժողովուրդ ենք մենք. հիւանդ հոգեպէս. և մեր այդ հիւանդութեան ամենամեծ նշաններից մէկն էլ մեր հրատարակչական հիւանդութիւնն է թէ երբ կազատվե՞նք այդ հիւանդութիւնից, միայն Աստուած գիտէ։

ԼՈՒԻԶ ՄԻՇԵԼ

Մարդկութեան ընդհանուր յեղափոխական պատմութեան մէջ 1905 յունվար 9|25ի կիրակի օրը ամենէն գեղեցիկ էջերէն մէկը պիտի կազմէ, էջ մը՝ արիւնով և արցունքով ցօղուած, էջ մը՝ դարերու մախքին տակ կամաց կամաց առկայծող ու վերջապէս մէկին փայլով մը բռնկող ժողովրդեան ընդվզումի արշալոյսին շողշողուն ճառագայթներով ոսկեզօծ, էջ մը՝ ուր վիշտն ու ժպիտը կը գըրկուին գերեզմաններու մասյլ փոսերու եզերքին և Ազատութեան ու եղբայրութեան արշալոյսին վճիտ հորիզոններուն դիմաց։

Պատմական հազուագիւտ զուգադիպութիւն մը պիտի ըլլայ տնչուշտ Լուիզ Միշէլի մահուան և Ռուսական Յեղափոխութեան ծնունդի օրուան թուականին զուգադիպութիւնը։

Սակայն ո՞վ էր Լուիզ Միշէլ.

Լուիզ Միշէլ հին յեղափոխականներու և հոգիի ամենավսեմ յատկութիւններով օժտուած անհատներու այն դասակարգին կը պատկանէր, որոնց նմանները գտնելու համար Հիւկօները, Պայրընները, Կարլայլները պէտք է վերյուշել։

Լուիզ Միշէլ այն էակներէն էր եղած, որոնց ներկայութիւնը հասարակութեան մը, ազգի մը, մարդկութեան քաղաքակրթուած մասին ազնիւ և անվեհեր հոգիներուն ոյժ և խրախոյս կը ներշնչեն իրենց օրինակով ընթանալու ազատութեան և հաւասարութեան դժուարին ճամբուն մէջ, և որոնց յիշատակը՝ զուրգուրանքով ու անկեղծօրէն պահուած յիշատակ մը՝ վսեմ հոգիներու խաղաղ խորշերուն մէջ յաւիտեան ջահ մը կըլլայ յետագաներուն։

Հօթ-Մառնի փոքրիկ մէկ գիւղին՝ Վռօնքուրի մէջ ծնած, 1853ին՝ կայսրութեան օրով կսկսի ուսուցչուհիի

համեստ բայց այնքան դժուարին պաշտօնը. որուն հասկնալու և գործադրելու եղանակին պատճառաւ իր առաջին ընդհարումները կունենայ կայսրութեան պաշտօնեաներուն հետ։

Հօթ-Մառնի գաւառապետը զայն իր ներկայութեան հրաւիրելով ծանրօրէն կը կշտամբէ Նաբոլէոն Գ.-ին վիրաւորած ըլլալուն համար։

Եւ սակայն—կը գրէ Լուիզ Միշէլ, իր «կեանքի» յիշատակները և պատահարները» գրքին մէջ — «Միմիայն զայն Հռովմայեցի կայսրի մը հետ բաղդատած էի»։

Այդ առաջին ընդհարումէն կազատի իր երիտասարդուհի մը ըլլալուն շնորհիւ, «առանց որուն զինքը Գայէն (Գիւիան) ղրկելու իրաւունքը պիտի ունենային» ինչպէս կը նկատէ գաւառապետը։

Թէպէտ այդ առաջին ազատումը չարգիլեց զայն քանի մը տարի յետոյ Նոր-Գալէտոնիայի Թիարանին ճամբան բռնել...

1856ին դարձեալ Բարիզ վերադարձած, կրկին իր վարժուհիի դերը կստանձնէ, այս անգամ վերջնականապէս մտնելով իր քարոզիչի և յեղափոխականի դերին մէջ, և յաճախելով Մօնմառթրի յայտնի ժողովները, որոնց վառվռուն քարոզիչներէն մէկը կ'ըլլար, հրահրելով այն կայծը, որը Ֆրանսական երրորդ յեղափոխութիւնը պիտի բոցավառէր։

Բարիզի փողոցային պատնէշներու վրայ, վառօդի ծուխին և հրացաններու որոտին մէջ լեր իր սեփական մթնոլորտը ապրող այդ կարմիր կին յեղափոխականը իր սրտին մէջ ունեցած է քնքշութեան անսպառ գանձեր, կանացի ինքնազոհութեան մայրական գորովի՝ զգացումներու անսահման ովկէան մը։

Բարիզի պաշարման ժամանակ պատահած մեծ իրողութիւնը՝ Վիկթոր-Հիւկօի կողմէն պատմուած այդ վսեմ հոգիին բովանդակ գեղեցկութիւնը ցոյց կուտայ անհերքելիօրէն։

«Այն ամենադաժան ժամանակներէն մէկն էր—կը պատմէ մեծ մարդասէրը—երբ հացը և ածուխը պերճանքի առարկաներ դարձած էին. Լուիզ Միշէլ ամեն օր շրջակայքի մանուկները կը հաւաքէր, անոնց կրթելու և միաժամանակ իրենց ծակ կօշիկներով ձիւներուն մէջ թափառելէ արգիլելու համար։

«Տիկին Մօրիս երբ լսեց, գնաց զայն տեսնելու և խեղճ աղջիկը գտաւ ծայրահեղ անձկութեան մը մէջ. դողդղջուն այն մաշուած շրջազգեստին տակ՝ որը տիրող եղանակին երբեք համապատասխան չէր։

«Երեկոյեան տիկին Մօրիս զիս մէկ կողմ առնելով ըսաւ.

«Այսօր Լուիզ Միշէլը տեսայ Փուֆ... չարմեցաւ: Ցուրտին դէմ պաշտպանուելու համար ոչինչ չունի. ո՛չ հագուստ, ո՛չ կօշիկ։ Իր աշակերտներով զբաղուած նոյն իսկ այդ պակասները նշմարելու ժամանակ չունի, բայց պահանջով եմ որ տանջուած է։

«Է՛հ, լա՛ւ—ըսի տիկին Մօրիսին, գրպանէս 10 ֆրանքի պանքնոտ մը հանելով—խնդրեմ այս դրամը իրեն տուէք, և թող գնէ ինչ որ պէտք է իրեն։

«Տիկին Մօրիս անյապաղ փութաց այդ գումարը հասցնել Լուիզ Միշէլին։

«Սակայն քիչ ժամանակ յետոյ դարձեալ իրեն այցելութիւն մը տալով զայն առաջուան չափ գէշ հագուած կը գտնէ։

—«Սրբութի՛ւն ինչ որ ձեզ պէտք էր չի՞ գնեցի՞ք— կը հարցնէ տիկին Մօրիս։

—«Ի՞նչ ընէի, այս աղջիկը ոչինչ չունէին, ո՛չ գուլպայ, ո՛չ կօշիկ և ոչ հացուկ։ Անոնք քիչ մը կօշկեցի և իրաւ որ 100 ֆրանքը վերջացաւ—կը պատասխանէ Լուիզ Միշէլ։

«Փրկէ՛ք—ըսաւ տիկին Մօրիս նախաճաշին—թէ Լուիզ ինչ է ըրած ձեր տուած 100 ֆրանքը. ահա թէ ինչ. բոլորն ալ ծախսեր է իր հաւաքած փոքրիկ աղջիկներուն համար, և զայն իր նախկին դրութեան մէջ գտայ կրկին։

«Դէպի գզրոցս գացի, անկէ երկրորդ 100 ֆրանքնոց պանքնոտ մը հանեցի, և տիկին Մօրիսի երկարելով.

—«Այս անգամ—ըսի—թող իրեն համար ծախսէ։

«Քիչ ժամանակ յետոյ անձնուէր յանձնակատարիս կը հարցնէի:

—«Ինչպէս Լուիզ Միշէլը լաւ հագուա՞ծ է։

«Ահ—ըսաւ տիկին Մօրիս — չէի համարձակիր ձեզի խօսիլ. անուղղելի է այդ աղջիկը. երեւակայեցէք որ ձեր երկրորդ նուէրը առաջինին ճամբով է գացեր։

—«Զանոնք տաքցնելու համար ածուխ գնեցի—ըսաւ ինծ Լուիզ Միշէլ յետոյ դեռ կային այնպիսիներ որոնք այնքան գէշ էին հագուած, չէի կրնար զանոնք այդպէս տեսնել։

—«Պէտք է սակայն որ իրեն պէտք եղածը ունենայ—ըսի ես—ահաւասիկ 100 ֆրանք ևս, բայց մինչև որ իրեն համար գործածելը չի խոստանայ մի՛ տաք իրեն։

«Երեկոյեան երբ տիկին Մօրիսի կը հարցնէի իր այցելութեան արդիւնքի մասին.

—«Ձեր գրած պայմանով Լուիզ Միշէլ մերժեց ընդունիլ 100 ֆրանքը—պատասխանեց տիկինը—և աւելցուց

— Չեմ կրնար—ըսաւ ինծ Լուիզ Միշէլ—ինծմէ զօրաւոր է այդ. չի պիտի կրնամ ինծ համար բան մը գնել, երբ մտածեմ թէ այդ ատաքը կը տառապին։

«Եւ անշուշտ երեւակայեցէք որ—վերջացուց տիկին Մօրիս—դարձեալ պանքնոտը ձգեցի իրեն»:

Եւ այս պատմութիւնը վերջացուցած ժամանակ Հիւկօյի աչքերուն մէջ արցունքի կաթիլներ երեւցած էին։

Լուիզ Միշէլի այնքան բեղմնաւոր և արկածալից կեանքին այս մէկ դրուագը բաւական է զայն հասկնալու, սիրելու համար այն վսեմութեան մէջ որը նոյնքան տիրապետող և անխառն եղած էր պատնէշներուն վրայ, սուլող գնդակներուն մէջտեղ, մխացող հրացանը ձեռքին, երբ Շօսէ Քլինեանքուրի վերջին պատնէշներուն ետեւ՝ ընկերներու դիակներուն մէջտեղ՝ երկու վերջին կռուողներու հետ էնք ալ կը կռուէր բռնակալութիւնը խորհրդանշանող Մաք-Մահոնի զօրքերուն վրայ...

«Շարժում»ի անցուկ լծերը գծագրարար չպիտի բաւէին այդ անձնազոհ դէմքի իւրաքանչիւր գեղեցիկ գիծը ներկայացնելու համար, դէմք մը՝ որ առաջին տեղերէն մէկն էր գրաւած Ֆրանսական յեղափոխութեան շարքերուն մէջ, ուժեղ կամք և անխախտ համոզումներ մարմնացուած մը, որը մինչև իր մահուան նախորդ օրերը՝ բազմաթիւ տարիներու բեռին տակ դեռ տոկուն ապրած մազերով լուսապսակուած՝ կը գրգռած մարդկային բռնաբարուած իրաւունքներուն. ճնշուածներուն, հարստահարուածներուն ու Մարդկութեան վերջնական Ազատագրութեան և եղբայրութեան գաղափարի տարածումին համար ժողովներ կազմակերպել ամէն մի անկիւն, քարոզել, բողոքել պահանջել...

Եւ կը մտածեմ թէ Լուիզ Միշէլի հոգին Յունվար 9ին օրը՝ այն ժամուն երբ Բարիզի ժողովուրդը իր հարիւր հազարաւոր ընտրեալներուն ուղեկցութեամբ իր մարմինը կառաջնորդէր դէպի վերջնական հանգստի կայանը՝ այն մարմինը, որը հանգիստը չէր ճանչցած երբեք՝ Լուիզ Միշէլի հոգին օտար այդ փառաշուք ցոյցերուն՝ թռած պիտի ըլլար անշուշտ հեռուն, հիւսիսի սառնամանիքներուն վրայ սաւառնելու և նոր ծնող Ռուսական Յեղափոխութեան իր խրախոյսի ողջոյնը տալու՝ Անհունին մէջ խոյանալէ առաջ...

ՀՐԱՆՏ

Բարիզ 12 Յունվար

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Հայրենիքէն եկող լուրերը ստիպում են մեզ՝ դարձեալ մի անգամ յիշեցնելու, որ անհրաժեշտ է վերսկսել

ԱՐՑՈՒՆՔՈՏ ԱՆՑԵԱԼԷՆ

ՊԱՏՈՒԵԼԻՆ

—)o(—

Տո՛ւք զկայսերն կայսեր,
Յիսուս

(Կաղանդչէք Պատուելի Թումայեանին)

(Շար. նախորդ թիւին)

Դարձեալ փոքրիկ, նպարավաճառի հաշուետետրին երեւոյթը ունեցող ձեռագիր երգարանները դուրս կուգան եւ վշտահար ձայնով մը կերգեն իրական բառերուն ու եղանակին բացարձակ հակոտնեայ մը նկատուելու ատրճան ապուշ ու անիմաստ երգը, որ նոյնպէս պատուելիին ճարտարութեամբ յարմարցուած է «Ակնի ընկերոյ» հայական եղանակին.

«Ողորմէ՛ ինձ, ողորմէ՛ ինձ,
Ով որդի Դաւթի Քրիստոս,
Այսպէս կաղաչէր ճամբուն վրայ,
Կոյր աղքատ Բարտիմէոս»

Առաջին համար բաւական կըլլայ բոլոր թմրածները իրենց երազանքի աշխարհէն դուրս բերել, ու աչքերնին սրբելով՝ տխուր ու միապաղաղ նայուածքներով զանոնք դէպի ամպիոնը ուղղել. Երգը 3–4 համար եւս կը շարունակուի, մինչեւ որ պատուելին, իր հնարագիտութենէն գոհ մնացած, ոտքի կ'ելլէ եւ կը շարունակէ իր «հայ գաղը պաշտպանող» ու «հայը սարքին ճանչցող» մեծ ու բազմահմուտ ճառախօսութիւնը թէպէտեւ այս անգամ շատ տարբեր ճամբով...

«Կարծեմ ձեր բոլորին ծանօթ է, որ վերջին քանի մը տարիներս Թիւրք կառավարութեան հալածանքի չափն ու սահմանը անցաւ իր հրլու եւ հնազանդ քրիստոնեայ հպատակներուն վրայ, որոնք սովրած ըլլալով իրենց փրկչէն միշտ հնազանդ ըլլալ իրենց մեծերուն, իրենց ամբողջ ժամանակը նուիրած էին սեփական զբաղումներու եւ լուրջ ու նուիրական պաշտամունքի. Թիւրքիոյ փողոցները այլ եւս անապահով էին. բռնութը կը նետուէր բանտ—առանց հարցուփորձի կամ քննութեան. Անոնց մէջ մանաւանդ առաջին տեղը կը գրաւէին անոնք, որ ժողովրդին լուսաւորութեան(*) եւ լաւութեան համար կաշխատէին, անո՛նք, որոնք կը ջանային փրկչին վսեմ ճշմարտութիւնները տարածել եւ լոյս սփռել խաւար մտքերուն մէջ եւ զանոնք մօտեցնել աւելի եւ աւելի սուրբ հոգւոյն, Մխիթարչին, որը միայն կարող էր համբերութիւն շնորհել իրենց եւ մխիթարել զիրենք այդ տառապեցուցիչ կացութեան մէջ եւ զօրաւոր նեցուկ մը ըլլալ իրենց...»

Այս վերջին բառերուն վրայ քարոզիչ նախագահը քանի մը ջերմեռանդ «ալէլուիա»ներ պոռալով «օրհնեալ ըլլայ իր անունը» կը յաւելու.

—Ես ինքս ալ, ըլլալով հայ մը եւ մանաւանդ այս վերջիններէն, բնականաբար ապահով չէի կրնար ապրիլ հոն... Օր մըն ալ, երբ գոլէճէս տուն կերթայի, քանի մը ոստիկաններ առանց հարցուփորձի, հակառակ խնդրանքներուս՝ թոյլ տալու որ երթամ կնոջս հաղորդեմ եղելութիւնը, առաջնորդեցին զիս բանտ...»

—Ամօ՛թ, ամօ՛թ, կը պոռայ կրկին նախագահը.

«Բայց այդ բանը անբաւական էր մանաւանդ որ լեցուած էր շատ մը լուսաւորուած եւ հաւատացեալ մարդոցմով, ուստի, զիս ալ, քանի մը ուրիշներու հետ ճամբու կը դնեն հեռաւոր քաղաք մը Զ., կոպիտ ու վայրագ ոստիկաններու վերահսկողութեամբ, ամէն բոպէ ենթակայ ըլլալով թէ՛ մորակի անխնայ հարուածներուն եւ թէ զզուանք պատճառող հայհոյանքներուն. Բայց հոս ալ չէր վերջանար մեր դառնութեան բաժակը... Քանի մը օր պահելով մեզ ստուգան ապտակ ու գարշահոտ բանտում, ձեռքերնիս ու ոտքերնիս շղթայեցին զարհուրեցուցիչ կապանքներով որոնք այս իրիկուն հետս բերած ըլլալով՝ պիտի ցուցնեմ ձեզ...»

Այս ըսելով պատուելին ետին կը դառնայ ու աղօթէ մէկուն կը հրամայէ բեմին վրայ զետեղուած այլանդակ սնտուկը բանալ.

«Դրուելով այն կապանքներուն մէջ կը յարէ պատուելին, չնայելով անձրեւին, ցուրտին ու փուքին, մեր զգացած անբացատրելի ցաւերուն, մենք ստիպուած էինք տակաւին ալ ճամբորդել դէպի Ա... ուր պէտք էր երեւնայինք բարձրագոյն ատեանի առաջ. Այս կապանքները...»

—Պատրաստ է, պատուելի, կըսէ պատանին ետեւէն.

(*) Շփոթութեան տեղի չտալու համար, հոս յիշենք, որ, վերջերս, առհասարակ շատ նրբացած քրիստոնեայ կեդրոններու մէջ, այս «լուսաւորութիւն» բառը համանիշ դարձած է ծուռ հաւատքէն դէպի Նոր հաւատք մը դարձնելու եւ, հետեւաբար, անգլիացին ալ միշտ այդ մտքով կառնէ զայն: Դ. Հ.

հրապարակական դասախօսութիւններ կազմուած եւրոպացիների ձեռքով և նուիրուած հայ դատին։ Դա կարեւոր է մանաւանդ Գերմանիայում ուր հասարակայ կարծիքը ջերմ հրաւէրների է կարօտ՝ հետաքրքրուելու այն օրերգութեամբ, որը կատարւում է Փոքր Ասիայում։ «Միութեան» դրամարկղը, ինչպէս միշտ, պատրաստ է օգնելու գործին, և ուրեմն Գերմանիայի մեր ընկերները՝ առանց դժուարութեան՝ կարող են ձեռնարկել կոնֆէրանսների կազմութեան։

Հայ ուսանողութիւնը ունի կատարելու բարոյական մի այլ պարտք։ Սասուն և Մուշ տիրում է սով։ Ազատութեան համար կուռող ժողովուրդը ոչ միայն զէնք չունի, այլ չունի հաց ու ապաստանարան։ Համալսարանական հայ երիտասարդութեան փոքրիկ աշակցութիւնը, դրամական հանգանակութեամբ, կը լինի ոչ միայն նիւթական նպաստ կարօտեալներին, այլ և բարոյական յենարան, որ ինքնին կարօտ է կուռող երկրի բնակչութիւնը։ Սասունի ապստամբութեան տասնամեակն է։ Ժողովներ կազմենք։ Ցրչենք քաջարի լեռնականների թաւերն ու վէրքերը և անենք ու տանք, ինչ կարող ենք։

— —

1) Լոյս տեսաւ „Հայաստանի Քարտէզը“, հայատառ, գեղեցիկ կազմով, գինը մի ֆրանք։ Այդ ծայրահեղ էժանութեան նպատակն է՝ միջոց տալ, որ ամեն մի գրագէտ հայ, ամեն միընտանիք ձեռք բերէ քարտէզը—հայրենագիտութեան այդ անհրաժեշտ միջոցը; Քարտէզը մուտք գտաւ եւ Ռուսաստան։

2) „Միութեան“ հայերէն և օտար լեզուներով արած հրատարակութիւնները՝ 1) Ազատութեան երգեր, 2) Ասպետամբ Սասունը, 3) Հայրենասէրի տաղերը, 4) Հայուհիներին, 5) Հերոսը 6) Լեռան ոգեմիկը, 7) Մարկ Բոցարիս, 8) Հայկական բէֆօրմների ծրագիրը, 9) Բերնշայնի լե սուվրանս տի բոբլը Արմենիին և լը տրվո ար տը լ'Էօրոբ, 10) Վանդալի Էէ զ'Արմենիին և լա ռեֆորմ տը լա Թիւրքի, 11) Պրէսանսէի լ'Արմենի է լա Մաքէդուան, 12) Բրանդէսի լ'Արմենի է լ'Էօրոբ, 13) Սասուն, 14) Երնշայնի տի լեյսան տէ զ'արմենհշան Վօյմ իւն տի Ֆրիշդան Էօրոբա, 15) Դը Կոնստան, Գոշէն, Պրէսանսէ, Ժօռէս, Լբոօլ, Լբոուա Բօլիս Ֆիր Ար ենիին իւն Մաքէտուան, 16) Բրանդեսի Արմենիին իւն Էօրոբա, 17) Ֆրապանի Տի արմենիշ Ֆրամ եւ 18) Սասունի քարտէզը (Ֆրանսերէն) տարածւում են, պրոպագանդի համար, «ձրիաբար»։ Եկեղեցական կազմակերպութիւնները կարող են ստանալ այդ հրատարակութիւնները ձրի, և վճառելով արդիւնքը մացնել իրենց դրամարկղի մէջ, յօգուտ հայկական դատի։

3) Խնդրում ենք ձեռնհաս ընկերներին՝ ձեռնարկել յեղափոխական գրքոյկների թարգմանութեան։ Նանկացողներին տրւում է հնօրար։

4) Պատրաստւում է Կիլիկիայի եւ հայկական նահանգների մանրամասն քարտէզը, Լատիներէն գրերով։

5) Համագումարը տեղի կունենայ ապրիլ 1ին։ Հրաւիրում ենք ուսանողական մարմիններին՝ վաղօրօք անդամագրել բոլոր ընկերներին, ուղարկել մեզ ցուցակներն ու անդամավճարները և պատրաստուել մասնակցելու տարեկան կոնգրէսին։

Տեղը և մանրամասնութիւնները կը յայտարարուին ժամանակին։

Ընկերական բարեւներով։

Լիազօր կոմիտէ

1905 յունուար 10

Փրանսիա

ԹՂԹԱԿՑԱՌԹԻՒՆ

Սիլէսարէ

Ամսոյս 8ին շաբաթ գիշեր ճիշդ ժամը 9ին քաղաքիս «Օրբէնպ» թատերասրահին մէջ ներկայացուեցաւ Արշակ Բ.ի տրագեդիան՝ Պարոնեանի կողմէ։

—Ամօ՛թ, ամօ՛թ թիւրքիային, վրայ կը բերէ երրորդ մը։

Սակայն պատուելին, այս ոգեւորութիւնը աւելի առաջ տանելու ըղձանքով, քիչ մը եւս կը տխրեցնէ զէմքը, ձայնը կը մեղմացնէ, ու որպէս թէ սոյն ահռելի ճակատագրի օրհասին տակ գտնուէր, կը շարունակէ։—

«Ու այսպէս, երեք-չորս օր շարունակ քալիր ենք, մինչեւ որ հասանք Ա... Քանի մը օր մնացեր էինք Ա.ի բանտը, երբ առտու մըն ալ լուր տուին թէ՝ այդ մեր դատավարութեան օրն էր, կամ ուրիշ խօսքով մեր կախաղան բարձրանալու եւ կամ ուրիշ կերպ մահուան մը վերջին օրը։ Այս լսելով կանչեցի միւս ընկերներս, բոլորն ալ Եւրոպա լուսաւորուած եւ շատ մը միս՛օնարներէ յարգուած ու վարձատրուած անձեր,—որոնք ինձ նման իրենց միայնակ աղօթքները աւարտած՝ ժամէ ժամ, վայրկեանէ վայրկեան կը սպասէին այն գերագոյն րոպէին, որը հլուօրէն եւ անբողոք դիմաւորելու արիութիւնը միմիայն մեզ հաւատացեալներուս տրուած է։ «Սիրելի եղբայրներ, ըսի իրենց, վերջին անգամը ըլլալ վ մեր ջերմագին աղօթքները բարձրացնենք միաձայն ամենալուր Աստուծոյն, մեր ճանաչ ամէն ջանք ի գործ դրաւ արդիւնաւորելու ներկայացման հասոյթը։

Դիտող

Ց. Գ.—Հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմ պարոնայք Աստուրեանի, Շիրինեանի և Մարգարեանի որ իրենց դերակատարութեամբ սքանչացուցին հանդիսականները պատիւ բերելով ազգին։

Շնորհակալութիւն նոյնպէս պարոնայք Նահապետեանի, Տիրացուեանի և Սրուանձտեանցին, ասոնք ալ տոմսերը ծախելու համար եռանդագին աշխատեցան։

Նոյն

ՎԱՌՆՑԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Դպրոցներու տնօրէն Հմայեակ Խուշպուլեան հրաժարական տուած է և հոգաբարձութիւնն ալ այդ հրաժարականը ընդունած է։

Հրաժարականին պատճառը հետեւեալն է։ Հոգաբարձութիւնը Գ. Նաթան Ամիրխանեանի կարտօնէ որ քանի մը պատանիներու և մանկահաս օրիորդներու հետերգեցողութեամբ պարապի դըպրոցին մէջ, կիրակի օրերը։ Այդ Երգեցիկ խումբին կը մասնակցին նաև դպրոցի աշակերտուհիներէն, Խուշպուլեան կուզէ արգելք հանդիսանալ, կռիւ մը կը փրթի դպրոցին մէջ, երիտասարդներ դուրսէն դպրոց կը վազեն հասկնալու թէ խնդիրը ինչ է։

Կռիւը կը սաստկանայ, վերջապէս Խուշպուլեան, ինչպէս կը-

Պատուելին կը դառնայ ու վերցնելով երկու խոշոր լախտանման փայտերը, որոնք երկար պատուտակով մը իրար կցուած են եւ որոնց մէջ նըկատելի են երկու ծակեր՝ ձեռքերը ամրացնելու համար, կը տեղաւորէ զայն առջեւի գրակալին վրայ։ ապա կանցնէ զայն ձեռաց ու կը շարունակէ բացատրութիւնը, հիմա ձայնին տալով լայկանութիւն մը եւ աչքերը լեցուած...

«Այս երկու փայտէ լախտերը որ կը տեսնէք պատրաստուած էր մեր ձեռաց համար... Այսպէս (եւ պատուակները կամրացնէ ու փայտերը կը սեղմուին...)։ Կրնաք երեւակայել այն ցաւը, որ կըզգայի երբ այս ահռելի տանջափայտերով ժողներ կը ճեղքէինք մենք, թողով տակաւին մէկ կողմ թորք լկիրլ զինուորներուն հայհոյանքներուն ազդած կսկիծը՝ ընդդէմ մեր սուրբ փրկիչ...»

—Ամօ՛թ, ամօ՛թ անոնց... կը դիմէ ոգեւորուած ու սրբացած նախագահը։

«Այսքանը բաւական չէր. այս փայտերուն կընկերանար երկաթէ ծանր օձիք մը, որ դրուած էր մեր վզին.»

Քովի պատանին, որ առաջինը չըլլալով դասը լաւ սերտած է, պատուելին ձեռք կուտայ կլոր երկաթէ օձիքը, կցուած խոշոր շղթայի մը։

Պատուելին ազատելով մէկ ձեռքը ծակէն, կառնէ զայն ու կանցնէ վզին, հանդիսականներու կողմէ յարուցուած սարսափի ու խղճահարութեան միաձայն ճիչի մը մէջէն... ապա բռնելով երկաթ, 15–20 մետրնոց շղթայի մը ծայրէն, ահագին աղմուկով դուրս կը քաշէ տուփէն, ի տես հեգնաքրքրութիւն նստողներուն, որոնք բերանաբաց եւ շնչառութիւններնիս իսկ զսպած՝ ելքին կը սպասեն անհամբեր։ Շղթային մէկ ծայրը կը կցէ վզի երկաթէ օձիքին, իսկ միւսը կը կախէ ամպիոնէն վար տալով ինքզինքին միաւորամայն պըժգանք ու ծիծաղ ազդող երեւոյթ մը։

«Իսկ այս բոլորէն վերջ, կը յաւելու, առնելով պատանիին ձեռքէն բաւական խոշորկեկ երկաթէ գնդակ մը,—սոյն երկար շղթային կցուած էր նաեւ այս ծանր գնդակը, որ անկարող կընէր կիս նոյն իսկ շարժելու...»

—Ո՛հ, Աստուած իմ, կը գոչեն հանդիսականներէն ոմանք, իսկ շարք մը բարեմիտ տարիքոտ կանայք լուռ արցունքներ կը թափեն։

—Զարհուրելի՛, սոսկալի՛ արարք, ամօ՛թ անոնց, կը յաւելու նախագահը։

—Ամօ՛թ, ամօ՛թ թիւրքիային, վրայ կը բերէ երրորդ մը։

Սակայն պատուելին, այս ոգեւորութիւնը աւելի առաջ տանելու ըղձանքով, քիչ մը եւս կը տխրեցնէ զէմքը, ձայնը կը մեղմացնէ, ու որպէս թէ սոյն ահռելի ճակատագրի օրհասին տակ գտնուէր, կը շարունակէ։—

«Ու այսպէս, երեք-չորս օր շարունակ քալիր ենք, մինչեւ որ հասանք Ա... Քանի մը օր մնացեր էինք Ա.ի բանտը, երբ առտու մըն ալ լուր տուին թէ՝ այդ մեր դատավարութեան օրն էր, կամ ուրիշ խօսքով մեր կախաղան բարձրանալու եւ կամ ուրիշ կերպ մահուան մը վերջին օրը։ Այս լսելով կանչեցի միւս ընկերներս, բոլորն ալ Եւրոպա լուսաւորուած եւ շատ մը միս՛օնարներէ յարգուած ու վարձատրուած անձեր,—որոնք ինձ նման իրենց միայնակ աղօթքները աւարտած՝ ժամէ ժամ, վայրկեանէ վայրկեան կը սպասէին այն գերագոյն րոպէին, որը հլուօրէն եւ անբողոք դիմաւորելու արիութիւնը միմիայն մեզ հաւատացեալներուս տրուած է։ «Սիրելի եղբայրներ, ըսի իրենց, վերջին անգամը ըլլալ վ մեր ջերմագին աղօթքները բարձրացնենք միաձայն ամենալուր Աստուծոյն, մեր փրկիչ Յիսուսին, որուն անուան համար կը հալածուինք։ Ընկերներս ընդունեցին առաջարկս, եւ մենք վստահ անոր պատասխանին, դէպի երկնաւոր հզոր գահին զրկեցինք մեր մաղթանքները. յանձնելով ինքզինքներս իր բարերար հովանաւորութեան միեւնոյն ժամանակ կրկնելով Գեթսեմանիի վսեմ ու վեհ աղօթքը, որ հնազանդ հոգւոյ մը մայր-նշանաբանն է։—Տէ՛ր, անցո՛ւր այս բաժակը թէ որ կամքդ է»

Հոս պատուելին աչքերը լեցուեցան կոկորդիլոսի դիւրաբեր արցունքներով. դուրս քաշեց թաշկինակը եւ զանոնք փորելու աստիճան ուժգնութեամբ չփել սկսաւ, որպէսզի արցունքը դուրս գալով՝ տիչ մը եւս կարմրին ու պատկերին աւելի եղերական գոյն մը տան։

(Շարունակելի)

—❁❁—

սեն բացարձակօրէն պայմաններ կը գնէ հոգաբարձութեան առջև իր պաշտօնը կատարելու վերաբերմամբ, միեւնոյն ժամանակ սպառնալով որ պիտի հրաժարի։ Հոգաբարձութիւնը որ այնքան չերմ պաշտպան էր խուշպուլեանի, ու մեծ յոյսեր ունէր անոր վրայ, ստիպուած կզգայ համաձայնիլ հրաժարականը ընդունիլ, քան թէ տնօրէնին առաջարկած պայմաններուն ենթարկուիլ։

Այնպէս որ Դաշնակցականներուն ոչ համակիր հոգաբարձութիւն և թաղականութիւն, որոնք ժողովուրդը կը խաբէին թէ այս տարի Դաշնակցականներ չըկան դպրոցին մէջ, խռովութիւններ չպիտի ըլլան, դպրոցին մէջ կարգ ու կանոնը գիտի վերահաստատուի, այսօր խղճուկ վիճակի մը մէջ կիյնան, երկու անգամ իրենց ընտրած անօրէնին հետ խոշոր ընդհարումներ կունենան և վերջի ի վերջոյ կստիպուին բաժնուիլ անկէ։ Մեղքը խուշպուլեանին չէ, այլ զայն տնօրէն հրաւիրողինը։

Կը ցաւինք որ մեր գուշակութիւնները իրականացան։ Բայց կեանքը անողոք է. յամառ տխմարութիւնը միշտ կը պատժուի։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում բոլոր այն բարեկամներին, որոնք նոր տարւայ եւ Մեղրի առթիւ մեզ շնորհաւորական կարտեր են ուղարկել։

ՆԵՄԱԿԱՏՈՒՓ

Սոֆիա Պ. Մ. Ա. ընդունեցինք ձեր ղրկած 20 ֆրանքը, որուն 8 լ. 20 սանդիմը կը յանձնենք տեղական որբախնամին։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Տօքթոր Թորոսեան կընդունի ամէն տեսակ հիւանդներ, կէսօրէն վերջը ժամը 2էն մինչեւ 4
Բնակարանն է
Փողոց Տունաւսքա թիւ 3

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարական մեծամասնութիւնը մասնաւոր ժողով մը ուցեր է, որուն մէջ Ելեւմտից Նախարար Պայաքօֆը յայտարարած է որ ակցիզի օրէնքը պիտի փոխուի, հետեւեալ կերպով.

1) Աւելի կատարելագործուած և խիստ հսկողութիւն պիտի կատարուի գարեջրային և սպիրտային գործարաններու վրայ։

2) Ոգի մեծաքանակ վաճառումը կառավարութիւնը ինք պիտի ընէ։

Լուցքիի, թղթախաղի եւ ծխախոտի թղթերու շինելը կառավարութեան մենաբոլ պիտի ըլլայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Յունվար 19ին Բեթերսպուրգէն կը հեռագրեն թէ Ցարը գործաւորներու պատգամաւորութիւնը ընդուներ է Ցարսքոյէ Սէլոյին մէջ։

— Վարշավայի քաղաքապետ ժէնէրալ Նոլքէն սպաննուած է յեղափոխականներու ձեռքով։

— Հոմէլի մէջ արիւնալի խռովութիւններ տեղի ունեցեր են, աղջիկ մը սպաննուած է և չորս հոգի ալ վիրաւորուած են։

— Գրոտնոյի նահանգին Քրինքէ քաղաքին մէջ գործադուլ կայ ամբոխը աւերեր է կառավարական շինութիւնը։

— Պաշտօնական յայտարարութիւնով մը կը հաղորդուի թէ յունվար 9ին Բեթերսպուրգի մէջ սպաննուեր են 96 հոգի և վիրաւորուեր 332։ որոնց 12ը մեռած են իսկ 32 տողջացած։

— Բեթերսպուրգի գործադուլը վերջացած կը համարուի։ Ռուսական Լեհաստանի վիճակը դէշ է, քաղաքական յուզումը կը սաստկանայ։

— Սարատովի մէկ գործադուլ կսպասուի։

— Ցարը ընդունելով գործաւորներու պատգամաւորութիւնը յայտնած է որ ինք լաւ դիտէ անոնց անտանելի կացութիւնը, պիտի աշխատի բարելաւել, բայց գործաւորները լաւ չեն ըրած որ հայրենիքի թշնամիներուն ականջ կախելով ուղած են ուժով ազդել կառավարութեան վրայ. որուն համար և իշխանութիւնը ուժ գործ դրած է և պիտի դնէ ամեն այդ տեսակ պարագաներու մէջ։

Կըսուի թէ Ցարին պատասխանը դժգոհներու գոհացում չէ տուած։

— 15000 գործաւորներ Վարշավայի խանութները թալանի տուեր են։ Զօրքերը հրազէն պարպեր են և շատ մարդիկ ըսպաններ ու վիրաւորեր են։ Մանրակրկիտ քննութենէ մը վերջը կառավարութիւնը շատ մը տոկիւմաններ գրաւած է, որոնցմով կը հաստատուի թէ ապստամբութեան դաւադրութիւն մը կայ եղեր։ Գլխաւորները ձերբակալուած են ու պիտի յանձնուին զինուորական դատարանին։

— Սիբիրիոյ Թոմսք քաղաքին մէջ գործաւորները գործադուլ ընելով հրազէն պարպեր են զինուորներուն վրայ։

— Սարատով քաղաքին մէջ ոստիկանութիւնը չէ համաձայնած զէնք պարպել գործադուլ ընողներուն վրայ։

— Իրքութսք (Սիպերիա) քաղաքը պաշարողական վիճակի պիտի ենթարկուի. տեղի ունեցած խռովութիւններու պատճառով։

— Բեթերսպուրգի մէջ լուր կը պտտի որ իշխան Միրսքիյ եւ ժէնէրալ Ֆուլօն խռովութիւններու պատճառով կը մեղադրուին։

— Միրսքիին հրաժարականը ընդունուած է և անոր տեղ Ներքին գործոց Նախարար նշանակուած է Բուլիգին։

—Յունվար 19ին Օտեսայի ոստիկանապետին վրայ սպաննութեան փորձ եղեր է։

—Ցարին սպայակոյտէն երեք հոգի ձերբակալուած են, յեղափոխական տրամադրութիւններ ունենալու կասկածով։

—Բեթերսպուրգի գործաւորական մեծ խառնակութեանց առաջնորդ տէրտէր Գաբոնը յայտնած է հիւսիսային Իտալիայէն փախչիլ Ֆրանսա, ճամբան յայտներ է ռուս յեղափոխական վարիչներուն հետ տեսակցութիւն ունենալ։

ԹՈՒՐՔԻԱ

Վերջերս Սելանիկի մէջ դատապարտուած պուլկար վարժուհի Սլավքա Զաքրովան ներուած է Սուլթանէն և ազատ արձակուած։

—Սուլթանը նոր իրատէով մը պուլկար կասկածելի ուսուցիչներուն և քահանաներուն, որոնց արգիլուած էր պաշտօն վարել, բոլորովին ներած է։

—Եւրոպական թերթերը վերջերս հաղորդեցին որ Սուլթանը ծանրապէս հիւանդ է. սակայն Բարիզի թուրք դեսպանը այդ լուրը պաշտօնապէս կը հերքէ։

—Սելանիքի մէջ Պուլկարիոյ ապահովագրական ընկերութեան արգիլուած է գործ ընել։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուս «Նովոյէ Վրէմիա» թերթին Մուքտէնի թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ։

Ռուսաց կորուստը Խունխո գետին մօտ 10000ի կը հասնի. ամենէն շատ զոհեր է Շեթակէլպերկի բանակը։ Ժէնէրալ Միշչինկօ վիրաւորուած է ծնկէն ծանր կերպով ու Մուքտէն պարկած է։ Ժէնէրալ Կոտրատինկօ կուրծքէն գնտակ ըզդունած է, որը հաներ են մէջքէն։

Ճապոնցիները ռուս յառաջապահ զինուորներուն նամակներ նետած են, որոնցմով կը հաղորդեն թէ Ռուսները ի զուր արիւն կը թափեն, որովհետեւ Ռուսիոյ մէջ խռովութիւններ կան ասոր համար աւելի լաւ կըլլայ անձնատուր ըլլան։

— Թօքիոյէն Լոնտոնի թերթերուն կը հաղորդեն որ ճապոնցիները վերջերս 1500 ռուսների քանած են։

— Ամիրալ Թոկօ յունվար 23ին կրկին ընդունած է ճապոն նաւատորմիղին հրամանատարութիւնը։

— Միքատոն Մարշալ Օյամայի շնորհակալութիւն յայտնած է Խունխոյ գետին քով ռուսներուն վրայ տարած յաղթութեան համար։

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ

Բեթերսպուրգի մէջ տեղի ունեցած խռովութիւններէն վերջը «Ս. Բեթերսպուրկսկիյա» վէտոմոսթի թերթը հետեւեալը կը գրէ։

«Սարսափելի շաբաթէն յետոյ որը ամենքը յուսահատեցուց և տանջեց, մայրաքաղաքի մամուլը ապագայի նոր յոյսերով կը վերսկսի իր ծանր գործը։ Անցքերն որոնք հիւանդագինօրէն ազդեցին մեր սիրտերուն, այնքան թարմ են, և շատ կէտերու մէջ այնքան անյստակ, որ տարբերուածել անկարելի է։ Ուրվհետեւ ատոր համար մեզի կը պակսի հոգեկան անդորրութիւն և անկողմնակալութիւն։

Պէտք է որ արիւնոտ ամպը ցրուի և իր եզրներէն դուրս եկած տարրերքը խաղաղի յանուն ճշմարտութեան և Ռուսիոյ բարօրութեան։ Միայն այդ պարագային պիտի կարենանք որոշ կերպով առանց մէկու մը ֆնասելու միայն ամբողջ ճշմարտութիւնը աչքի առջեւ ունենալով անկեղծաբար արտայայտել մեր միտքը։

—Առայժմ ամէն մէկ աւելորդ սուտ խօսք, դատափետում կըրքեր պիտի գրգռէ, խռովութիւնը պիտի հրահրէ...

Որչափ ալ որ հրապարակագրի համար լռելը ծանր ըլլայ, քանի որ մտքերը և զգացմունքները ելեքտրական տակ տօքի մը պէս գրիչին ծայրը կուգան, պարտականութիւն մը կայ, որ կըստիպէ ինքզինքը զսպել։

Անհաշտ բանակներուն, ամենատխուր անհամաձայնութիւններով բռնուած խաւերուն փակաւ և մեր սակաւաթիւ ինտելիգենցիան։ Ի՞նչպէս իրարու մօտիկնանք. ի՞նչպէս համաձայնինք, այդ մասին ուրիշ անգամ...

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна